ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՆՄՈՒՇ

Արևելյան գեղարվեստական մետաղի հազվադեպ նմուշներից է Հայաստանի պատմության պետական Ցանգարանում պահվող № 2663 բրոնզե սակրը, որը գտնվել է 1978 թ. Երևանում, Հրազդանի ձորում, Սարդարի բերդի տարածքում։ Առայժմ այն եզակի նմուշ է, չունի համեմատելի զուգահեռներ Հայաստանում։

Սակրը (չափերը՝ 17×18 սմ) պատրաստվել է ձուլման եղանակով, ամբողջական երկճեղք կաղապարում, որից հետո ենթարկվել է կրկնակի մշակման։ Փորագրման հնարքով չեշտվել, հստակ են դարձել իրանը հարդարող հարուստ զարդաձևերը։ Զևով երկսայր է, կիսալուսնաձև սրածայր թևերով, որոնք կենտրոնում միացած են ելուստավոր կոթառով։ Թևերն ունեն երկկողմանի ծաղկազարդ դաշտ, եզերված կիսալուսնաձև շրջանակներով, որոնք ծայրերում ավարտվում են բացված լոտոսներով։ Բուսական զարդերի՝ լոտոսների, կակաչների, բողբոջավոր շիվերի պերճ ֆոնի վրայով ընթանում է մեկական փիղ, տրորելով բազմերանգ թփերն ու ծաղիկները (նկ. 1)։

Առաջին հայացքից թվում է, թե փիղ զարդապատկերները երկու երեսի վրա էլ նույնն են։ Իրականում դրանք տարբեր են։ Կենդանիները պատկերված են որոշակի կանոնով. երեսներից մեկի վրա դրանք խոշոր են, երկար կնճիթով, մյուս երեսին հստակ երևում են մարմնով փոքր, կարճ կնճիթով մատղաշ ձագեր։ Հավանաբար ծնող զույգն է ձագերի հետ, մի շատ տարածված զարդաձև միջնադարյան զարդարվեստում[1] (նկ. 2)։

Փիղ զարդապատկերը լայն տարածում ուներ միջնադարյան արևելյան կիրառական արվեստում, իբրև ժամանակի գեղագիտական ըմբռնումների դրսևորում։ Հնդկական արվեստում այն խորհրդանշում էր Ինդրային[2], ահեղ ռազմիկին, գետերի ու ջրերի հովանավորին, որը փղի վրա նստած սլանում էր տիեզերքում, սանձելով որոտն ու կայծակը։ Աստվածներն հնդկական պանթեոնում գիտությունն ու արվեստը հովանավորող Գանեշը, որն ամենաբարձր գիրքն էր գրավում այնտեղ, պատկերվում էր մարդու մարմնով, փղի գլխով[3]։

Բուդդային այլ մեկնություն ուներ փիղը մահմեդական կրոնում։ Համաձայն Ղուրանի 105 սուրհայի[4], այն կապված է «Փղի արշավը Մեքքա» պատմվածքի հետ, որը, ուսումնասիրողների կարծիքով[5], Ղուրանում հանդիպող պատմական փոքրաթիվ սուրհաներից է։

Զարդաձևերը, բուսական թե կենդանակերպ, զուսպ են, առանց ավելորդ պաճուճանքի, որը խոսում է վարպետի նուրբ ճաշակի և դեզագիտական մեծ զգացողության մասին։ Սակրի կոթը եղել է փայտից և, բնականաբար, չի պահպանվել։

Առավել ուշագրավը, սակայն, սակրը հարդարող արձանագրություններն են, որոնցից առաջինը նվիրված է Հաջի Կավամի Արու-Իսհակ Խջուին։

1. ساقی بنور باده بر فروز جام ما

«Սաղի, գինու լույսով բոցավառիր մեր գավաթները»։

2. [بکی هست و هیچ نیست جز او] وحده لا اله الا الله

«Կա մեկը և ոչինչ նրանից բացի»։

«Մեկ է աստված և չկա աստված բացի Ալլահից»։

Արձանագրությունների ընթերցումից պարզվում է[6], որ դրանցից առաջինը պատկանում է պարսից պոեզիայի դասական Հաֆեզի գրչին (XIV դար)։ Արձանագրություններից երկրորդը, որն ավելի ջուր մահմեդական կրոնի հայտնի բանաձևերից է, իր գրության ձևով վերագրվում է XVIII դարի պարսիկ բանաստեղծ Սոիդ-Ահմեդ-Հաթեֆին։ Ժամանակակիցներին նա հայտնի էր իբրև դերվիշ և մոլի հարբեցող[7]։ Նրան փառք և անմահություն բերող եղան նրա խորիմաստ ու գեղեցիկ թարգիրանդները, որի հանգավորվող կիսատողերից երկուսը փորագրված են սակրի վրա։ «ترجیع بند» պարսկերեն բառ է, թարգմանաբար նշանակում է կրկներդ, կազմված երկու հանգավորվող կիսատողերից[8]։

---

1 Ա. Մնացականյան. Հայկական զարդարվեստ. Երևան, 1955, էջ 209—250։

2 И. Р. Гусев. Индуизм (история формирования, культовая практика). М., 1977, с. 28.

3 Նույն տեղում, էջ 102։

4 Коран. М., 1963, с. 496.

5 М. Б. Пиотровский. «Поход слона» на Мекку (Коран и историческая действительность).—В кн.: Ислам, М., 1984, с. 28.

6 Хафиз, 117 газелей, М., 1981; 2. 30. Արձանագրություններն ընթերցել է Հ. Գ. Փափազյանը։ Տեքստը վերականգնված է։

7 К. Смирнов. Дервишн. Тифлис, 1911, с. 27.

8 Персидско-русский словарь, составитель Б. В. Миллер. М., 1950, с. 193—194.

Սակրերը, իբրև զենք, արևելյան ժողովուրդներին հայտնի են հնագույն ժամանակներից՝ տակավին վաղ բրոնզի դարաշրջանից[9]։ Ամենավաղ օրինակները ծագում են շումերական աշխարհից[10]։ Իբրև հարձակողական զենք հետագա դարերում դրանք ունեցել են մեծ գործածություն։ Ավանդույթի ուժով գոյատևել են մինչև ուշ միջնադար։ Ֆոն-Վինկլերի կարծիքով սակրերը կամ մարտական կացինները ռազմական գործողություններից վերջնականապես դուրս են եկել միայն XVI դարի երկրորդ կեսից[11]։ Այնուհետև նրանք ունեցել են զուտ դեկորատիվ նշանակություն։

Սակրը միաժամանակ խորհրդանշել է աշխարհիկ բարձր իշխանություն[12]։ Հաղթական երթի ժամանակ տղամարդիկ կրում էին երկսայր սակրեր, փայտե երկար կոթերով[13]։ Օտարերկրյա դեսպաններն ի նշան լիազորությունների, պաշտոնական ընդունելությունների ժամանակ կրում էին հատուկ դեսպանական կացիններ[14]։

Վերջապես, սակրը եղել է մահմեդական աշխարհում մեծ տարածում գտած անապատական համայնքների անդամների՝ սուֆիների և դերվիշների անձնական նշաններից մեկը։

Քննության ենթակա նմուշը, ամենայն հավանականությամբ, «թաբարզին» կոչված առարկաներից է, որ կրում էին դերվիշները։ Այդ են.



Նկ. 1. Նկ. 2.

---

[9] С. А. Есаян. Оружие и военное дело в древней Армении (III—I тыс. до н. э.). Ереван, 1966, .с 33.

[10] А. А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, с. 60, 62, 72.

[11] П. фон Винклер. Оружие, руководство к истории, описанию и изображению ручного оружия с древ. врем. до нач. XIX в. СПб., 1894, с. 211—212.

[12] Е. Е. Кузьмина. Скифское искусство, как отражение мировоззрения однон из групп индо-иранцев. М., 1976, с. 54.

[13] Индийские миниатюры XVI — XVIII вв., М., -1971, табл. 54.

[14] П. фон Винклер. Указ. соч., с. 212.

[15] Ե ղ ի ա ն դ Շ ա հ ա զ ի զ. Հին Երևանը. Երևան, 1931, էջ 29։

դարանքում բացառում են կենդանակերպ (մարդկային թե կենդանական) մոտիվները, որով և տարբերակվում են մյուսներից[16]։ Չի բացառվում, որ թաբարզինը պատրաստված լիներ և Հարիֆի կենդանության օրոք։

Երևանի տարածքում գտնված դերվիշական թաբարզինը որոշակի պատկերացում է տալիս նրա կրողի հասարակական դիրքի, սոցիալական որոշակի խավի պատկանելու մասին։

Ն. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ԱՄՐՈՑԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեության կարևոր ոլորտներից է բերդաշինությունը։ Այն կազմել է կառուցողական գործի անբաժանելի մասը և հուսալի պաշտպանական համակարգերի միջոցով ապահով դարձրել երկիրը նվաճողական արշավանքներից։ Սյունիքի բնական պայմանները նպաստավոր էին պաշտպանական համակարգեր ստեղծելու համար և այստեղ ծավալվում է ռազմապաշտպանական ընդարձակ գործունեություն։ Եթե համեմատելու լինենք Հայաստանի տարբեր նահանգներում ու Սյունիքում կառուցված բերդերն ու ամրոցները, ապա կարելի է նկատել ճարտարապետական հորինվածքի, շինարարական տեխնիկայի և տեղանքի ընտրության հետ կապված զգալի տարբերություններ։ Եթե Սյունիքում բերդերի կառուցման համար ընտրում էին սարաոստների գագաթները (Սմբատաբերդ, Վասակաշատ, Որոտն, Կկոց քար և այլն), ապա Կիլիկիայում, օրինակ, բերդերի տեղադրության համար ընտրում էին առավելապես լեռնաշղթաների ստորոտներում գոյություն ունեցող բնական ժայռացցերը, որոնց վրա կառուցում էին աշտարակներն ու բուրգերը, իսկ նրանց միջև առաջացած տարածությունները փակում երկայնական պարսպապատերով (Լևոն կլայ, Լամբրոն, Կյուղլեկ, Բագրաս, Սիս և այլն)։ Տաշիր-Զորագետ նահանգում պաշտպանական հենակետերի կառուցման համար նույնպես ընտրում էին եռանկյունաձև հրվանդանները (Կայան, Կայծոն, Լոռի, Ախթալա), սակայն այստեղ հանդիպում են նաև հարթավայրային ամրոցներ, ինչպես, օրինակ, Բերդավանը։

Պաշտպանական կառույցների ճարտարապետությունը Սյունիքում վերելք է ապրում միջնադարում։ Սյունիքով անցնող առևտրական ճանապարհները նպաստել են առևտրի զարգացմանը, բայց միևնույն ժամանակ հանդիսացել են այն հիմնական ուղղությունները, որոնցով թշնամին ներխուժում էր երկրի խորքը։ Այդ իսկ պատճառով բոլոր առևտրական ճանապարհները ունեցել են ռազմաստրատեգիական նշանակություն և պաշտպանվել են բերդերի ու ամրոցների համակարգերով։ Այսպիսով, անհրաժեշտություն է առաջ եկել ստեղծելու համապետական, արտաքին քաղաքական՝ ստրատեգիական ամրություններ և երկրի ներսում Ներքաղաքական՝ տակտիկական ամրություններ համակարգեր։ Պաշտպանական այս երկու ընդարձակ ծրագրերը իրագործվել են տարբեր ինտենսիվությամբ, ելնելով երկրի արտաքին և ներքին քաղաքական վիճակներից ու պահանջներից, սակայն երկրի պաշտպանությունը օտար զավթիչների ներխուժումներից միշտ եղել է առաջնահերթ և կարևորագույն խնդիրը բոլոր ժամանակներում։

Ինչպես ասացինք, ամրոցաշինությունը ծավալվեց ոչ միայն արտաքին քաղաքականության գրգռմամբ, այլև երկրի ներսում առաջացած ներքին քաղաքական իրավիճակից հետևելով, քանի որ առանձին նախարարներ, իշխաններ օտար հովանավորություններից օգտվելով ստեղծում էին մեկուսացված ավատապետություններ, իշխանություններ, որոնք նույնպես ռազմականացման կարիք ունեին։ Ստրատեգիական և տակտիկական պաշտպանական համակարգերի ստեղծումը կապված էր դեպի Սյունիք տանող հիմնական ուղղություններին հարակից կենտրոնական ամրությունների և երկրի ներսում գավառային, երկրորդական, օժանդակ ամրությունների ցանցի կազմավորման հետ։ Այս նկատառումներից ելնելով կարևոր առևտրական ճանապարհներին, իրարից որոշակի հեռավորության վրա, կառուցվել են բերդեր, պահակակետեր, որոնք ունեցել են զուտ ռազմական նշանակություն։ XII—XIII դդ. սկսած այս ճանապարհների երկայնքով և բերդերի հակողության տեսադաշտերում կառուցվել են կամուրջներ, քարավանատներ։

Սյունիքով անցնող Դվին-Բերդկունք-Պարտավ-Կապան ծով առևտրական ճանապարհի Վայոց ձորով անցնող Սիսաքան-Կոթ ճանապարհահատվածում մինչև օրս պահպանվել են պաշտպանական համակարգի մաս կազմող մի քանի կենտրոնական և երկրորդական նշանակություն ունեցող բերդերի ավերակներ, որոնք դեռևս ուսումնասիրված չեն։ Առևտրական ճանապարհի երկու ճյուղավորումներից Դվին-Պարտավ տանող արաբական հին ճանապարհը ուսումնասիրել են Լևոն, Ս. Լիսիցյանը, Հ. Մանանդյանը և ուրիշներ, որոնց աշխատություններում ներկայացված են պատմական հետաքրքիր տեղեկու-

[16] Ю. М. Миллер. Художественное оформление холодного оружия Турции XVII—XVIII веков.—Труды Гос. Эрмитажа, т. 2, Л., 1958, с. 169.